

ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԱՌՈՑ

ՈՐ Ի ԼԵՊՈՎԸ ԱԽՍՏՐԻՈՑ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՑ

Յիշասակարանաց պակասութեան պատճառաւ՝ չի գիտցուիր թէ երբ արդեօք սկիզբն ունեցած է Լէոպոլի հայածէս եպիսկոպոսական թեմին հաստատովիւնն, բայց հաւանական է որ ժի գարուն մէջ եղած ըլլայ. որովհետեւ նոյն գարուն մէջ 'ի Ռուսաստան գաղթող Հայք իրենց սեփական եպիսկոպոս մ'ունէին, և հաւաստեաւ լեհաց Մեծ կազիմիր թագաւորին օրերը : Հին ժամանակ Լէոպոլի արքեպիսկոպոսունք իրենց ստորակարգեալ եպիսկոպոսական թեմեր ունէին, որը յետոց ննջուեցան ժամանակի յեղափոխութիւններէն : Իսկ Լէոպոլի մէջ յաջորդող եպիսկոպոսունք են մինչև ցայսօր հետևեալներն .

Եպիսկոպոսունք

Յովհաննէս Ա. 1865. - Գրիգոր Ա. 1884 - 1444. - Աւետիք, 1445-45. - Քրիստափոր, 1464 - 78. - Ստեփանոս, 1484 - 92. - Գայուստ, 1549. - Գրիգոր Բ. 1557 - 62. - Պարսամ, 1578 - 82. - Յովհաննէս Բ. 1589. - Գարդիէլ, 1606. - Մեսրով, 1608 - 1620 :

Արքեպիսկոպոսունք

Նիկոլայոս Թորոսովիչ, 1626-1684. - Վարդան Յունանեան, 1684 - 1715. - Յովհաննէս Տովքիթ Աւգուստինովիչ, 1715 - 51. - Յակովոս Ստեփանոս Աւգուստինովիչ, 1752 - 83. - Յակովոս Թումանովիչ, 1783 - 98. - Յովհաննէս Սիմոնովիչ, 1799 - 1816. -

Գայետանոս Վարդերեսովիչ, 1817 - 34. - Սամուէլ Կիւրեղ Ստեփանովիչ, 1834 - 58. - Գրիգորիոս Միքայէլ Սիմոնովիչ, 1858 - 75. - Գրիգոր Յովսէփ Բումաշքան, 1875 - 81. - Իսահակ Կիոլայոս իսահակովիչ, Ընտրեալ 'ի 1882: Լէոպոլի Նուիրապետութիւնն հետեալ կազմակերպութիւնն ունի.

Մետրապոլիտական Սիրներդուս, զորկը կազմեն ներկայապէս մի նախագահ, երեք աստիճանաւոր կանոնիկութիւնը և չորս պատուաւոր կանոնիկութիւնը:

Մետրապոլիտական խորհրդոյ ատեանն, որոյ նախագահ է Արքեպիսկոպոսն, և խորհրդականքն են վեց անձննք և մի քարտուղար: - Այս ժողովն սահմանեալ ժամանակի չունի գումարուելու համար, այլ ըստ պահանջելց հարկին և պարագայից :

Առեան Եկեղեցական դատողութեանց, ամուսնական խնդրոց համար սահմանեալ. որոյ նախագահ կը բազմի նոյնապէս Արքեպիսկոպոսն՝ իւր երեք խորհրդականօր և մի Ամուսնութեան ջատագովար (Defensor matrimonii): - Այս ատենի վճռոց դէմ եղած բողոքներն կը քննուին նախ Լէոպոլի լատին Արքեպիսկոպոսէն, և եթէ վերըստին բողոքութիւնն քաղաքին յունածէս Արքեպիսկոպոսին ատեանը:

Լէոպոլի թեմն կը տարածուի Կալիցիայ գաւառի և Բաւկովինի գյուղեան մէջ. յորում կը գտնուին երեք Գահերիցուրիշներ (Decanatus), որք են՝ Լէոպոլի, Ստանիսլաւալուսի և Կուտենայ. յորս կը բովանդակուին ինն

ժողովրդապետութիւնք, յորոց երեքն կայսերական հովանաւորութեան ներքեւ կը գանուին և մնացածներն առանձնականաց, բաց աստի՛ կայ նաև մի մատրանապետութիւն (Capellania), որ նոյնպէս կայսեր իրաւասական պաշտպանութիւնը կը վայելէ:

Ա. Գաներիցորիւն Լէոպոլսի:

Բատ հին աւանդութեանց՝ Հայք ունէին լէոպոլսի մէջ՝ 1483 տարիէն ըսկաել փայտաշէն եկեղեցի մը, որոյ տեղ 1363ին գորական ճարտարապետութեամբ նոր եկեղեցի մը շինուեցաւ քարաշէն, որ և մի մասն կը կազմէ այժմեան եկեղեցւոյն՝ սկսեալ յաւագքնէն մինչև ցամպիոնն: Գրեթէ մի և նոյն ժամանակ նաև զանգակատուն մը եկեղեցւոյն մօտ շինուած է. իսկ եկեղեցւոյն մնացած մասն և դասն՝ անցեալ դարս մէջ՝ ՚ի 1723՝ շինուեցաւ, արգեամբք Քրիստովորի Աւգոստինովիչ, որ դատաւոր էր Հայոց Եկեղեցին վերստին նորոգուեցաւ յամին 1860, նուիրատուութեամբ բարեպաշտ անձանց, և կը կոչուի անուամբ Վերափոխման Սրբոյ կուրսին:

Լէոպոլսի գաներիցորիթեան ժողովրդապետութիւնն ունի ներկայապէս ժողովրդապետ մը և շորս Աթոռակալ: Ժողովրդապետութիւնն կը պարունակէ 180ն անձինք: կը գտնուի նաև աղջրկանց դաստիարակութեան գորոց մը, մայր եկեղեցւոյն մօտ ՚ի վանս հայածէս բենեդիկտեան կուսանաց: Այս միաբանութիւնն սկիզբն ունեցաւ կամենից և եսալովիչ քաղաքի կուսանաց ՚ի մի ժողովուելով, որք յետոյ ՚ի 1690 ամին՝ Ազեբսանզը Ութերորդ քահանայապետին կարգադրութեամբ՝ տեղափոխեցան ՚ի լէոպոլսի, բնդունելով Ս. բնենդիկտեայ սահմանագրութիւնը: Ներկայապէս վեշտասան ուխտաւոր կուսանք կը գտնուին վանաց մէջ, իրենց արբասուհւոյն առաջնորդութեան ներքեւ:

Բ. Գաներիցորիւն Ստանիսլաւպոլսի:

Ստոյգ է՝ որ 1663 տարուցնէ՝ ՚ի վեր, որ և գրեթէ Ստանիսլաւպոլիս քաղաքին շինութեան ժամանակն է, կը գտնուէր հոն հայածէս ժողովրդապետութիւն մը. մանաւանդ թէ ամէն հին ժամանակագիրք կ'աւանդեն՝ որ քաղաքին առաջն բնակիչներն հայազգի էին: Այս ժողովրդապետութեան հաստատողն եղաւ Անդրէս Պատոլի, որ և փայտեայ եկեղեցի մը կառուցանել տուաւ իւր ծախիւք: Ճամանակի վրայ անցնելէ յետոյ՝ երբ եկեղեցին հնացաւ, վերը յիշուած Անդրէի որդին՝ Յսվէտի, Ճեռնուութեամբ ժողովրդեան՝ 1744ին կառոյց քարաշէն եկեղեցի մը, որ 1752ին օծուեցաւ: Վերըստին նորոգուեցաւ 1772ին և օծուեցաւ. և անկէ վերջը երեք անգամ ալ դարձեալ նորոգութեան կարօտութիւն ունեցաւ, նախ ՚ի 1830, և ապա ՚ի 1854, և յետոյ ՚ի 1869, երբ ահաւոր հրցեհէ մը ծախեցաւ՝ յամին 1868, ՚ի 28 սեպտեմբերի. այս վերջին շինութեան ատեն՝ քովը կառուցին նաև ժողովրդապետանոց մը. իսկ եկեղեցին նուիրեալ է Ս. կուսին Անարատ յլութեան անուամբ:

Ժողովրդապետութիւնն բաղկացեալ է՝ ՚ի 100 անձանց: Ստանիսլաւպոլիս գաներիցութենէն կախումն ունին հետեւալ ժողովրդապետութիւններն.

Բրնձեցանիի ժողովրդապետն, 180 անձամբք:

Լիսիեցայ ժողովրդապետն, որոյ իրաւասութեան ներքեւ կը գտնուին նաև լատին ժողովուրդն, որոց թիւն է 392 անձինք. իսկ Հայոցն 96 անձինք:

Թիսմինիցքայ ժողովրդապետն, 159 անձամբք:

Գ. Գաներիցորիւն կուտնեայ:

Կուտենայ գաներիցութիւնն կը բովանդակէ իւր մէջ հինգ ժողովրդապետութիւն, երկուքն բուկովինի դրսու-

թեան մէջ և մնացած երեքն կալիցիա
գաւառին մէջ։

1. - Բուկովինի գքսութեան մէջ գըտ-
նուածներն են։

Ժողովրդապետուրիշն Յեսնովիչի.
յորում 1836 ամէն՝ 'ի վեր Հայք՝
Լատինաց եկեղեցւոյն մէջ սեղան մը
կառուցեր էին յանուն Ս. Լուսաւոր-
չին, և հոն իրաւունք ունէին հայերէն
լեզուաւ սրբազոն պաշտամունքը կա-
տարելու. բայց 1870ին սկսան շինել
նոր եկեղեցի մը՝ բարեպաշտ ազգայ-
նոց նուիրատուութեամբ, զոր ճոխա-
ցուցին Օգոստափառ կայարն և տէրու-
թեան Խորհրդարանն առատաձեռն օգ-
նութեամբք և ընծայիք. և 1875-79ին
աւարտելով շինքն՝ օծուեցաւ եկեղե-
ցին յանուն Ս. Լուսաւորչին, և անտի
'ի վեր եկեղեցական պաշտամունք Հայք
այս իրենց սեփական եկեղեցւոյն մէջ
կը կատարեն. Եկեղեցին ունի չորս սե-
ղան, յորոց մին Ս. Խաչին պատկերաւ,
զոր նուիրեց եկեղեցւոյն՝ հանգույցեալ
Քահանայապետն Պիոս իններորդ :
Սոյն ժողովրդապետութեան կը վերա-
բերին 1420 անձինք։

Ժողովրդապետուրիշն Սուչաւայի,
214 անձամբք։

2. - Կալիցիա գաւառին մէջ եղած-
ներն են.

Ժողովրդապետուրիշն Հորոտեն-
քայ, որոյ իրաւասութեան ներքեն կը
գտնուին Յալէչիքի, Յորտքով, Գոլո-
մէա, Գուրցաք, Գոցման, Ժողովրդա-
պետութեան վերաբերող ազգայինք են
395 անձինք։

Ժողովրդապետուրիշն Գուրիի,
1800 անձամբք։

Ժողովրդապետուրիշն Սևիատինի,
414 անձամբք։

Լէսոպօլսի մէջ ընդ հովանաւորու-
թեամբ Արքեպիսկոպոսին և երեք մե-

ծամեծաց ազգայնոց՝ կը գտնուի Գրա-
շատուն մը, յորում ժողովնալ են ղը-
րամագլուխ իւրաքանչիւր ժողովրդա-
պետութիւններէ, և տարւոյն մէջ ե-
կած շահն կը բաժնուի ըստ յան-
ձնուած ղրամագլուոց քանակին՝ ամէն
մէկ ժողովրդապետութեան ազգատնե-
րուն. — Անցեալ տարուան մէջ դրա-
մագլուոյն բովանդակութիւնն էր 262
հազար ֆիորին: — Գրաւատանն ժողո-
վյն նախագան է Արքեպիսկոպոսն, և
ունի երեք ինամակալներ և հինգ
պաշտօնակալ անդամներ։

Մետրապոլուտական սիւնհոդին հո-
վանաւորութեան ներքեն կը գտնուի
նաև Որբանոց մը, որ հաստատուած
է յամին 1865, յանուն Յովսէփի Թորո-
սելիչի, որ էր վարդապետ բժշկու-
թեան, մեռեալ յամին 1869. սա բո-
վանդակ իւր ստոցուածը կտակեց ոյս
որբանոցը կանգնելու համար, որոյ նը-
պատակն է մուուցանել և դաստիարա-
կել՝ ի գիտութիւնս և յարուեստս աղ-
քատ և որբ մանուկներ՝ որք կը զըտ-
նուին լէսոպօլսի մեմին մէջ. յորս են
նաև որբանոցը հաստատողին ընտա-
նեաց վերաբերեալ անձինքն, որոնք
պիտի ընդունուին՝ 'ի վարժարանն 7-10
տարեկան եղած ատենին: Մանուկ-
ներն կը պահուին վարժարանին մէջ և
նախ կը զարգանան՝ 'ի տարրական
ուսմիւնս, և յետոյ 'ի բարձրագոյնս.
յետ աւարտելու ուսման ընթացքն՝ ե-
թէ հանճարեկը հանդիսանան՝ ուրիշ
տեղ մասնագիտութեան կը պարապին
որբանոցին ծախիք, իսկ եթէ ոչ՝ ար-
հեստից կը դրուին, գարձեալ նոյնպէս
Որբանոցի իննամակալութեան ներքն
մնալով, մինչև որ կարենան իրենք զի-
րենք պահելու կարողութիւն ստանալ:
Որբանոցն ունի վերատեսուչ մը և
հինգ հոգարարձու անդամներ։

